ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Տփխիսաբնակ պ. Արշակ Աբրահամեան Նազարեանցը ուղարկել է Նուէր Մայր Տաճարին մի զոյգ շքեղ և խոշոր դեղնապղինձ ոսկեզօծ աշտանակ, որոնք Նուիրատուի բաղձանաց համաձայն զետեղուեցին Ս. Իջման սեղանի առջև։

Վեհափառ Հայրապետը հաճութեամբ ընդունելով Տաճարում այդ աշտանակները, բարեհաճեց օրհնել յարգելի Նուիրատուին։

Ուստի խնդրում եմ հրատարակել «Արարատ»ի մերձակայ համարում ի գիտութիւն բարեպաշտ Նուիրատուի։

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս.

ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Վարագայ վանքի կրթական հաստատութեան յիսնամեայ Յոբելեանը, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի վերին հովանաւորութեամբ, պիտի տօնուի Յունիս 20 (Յն Յուլի)ի կիրակի օրը, Վարագայ վանքին մէջ, ժողովրդական լայն մասնակցութեամբ։

Ուստի յատկապէս կոչուելիս հայութեան բոլոր ցրուած զաւակների անհատները և կրթական, դրական, բարեգործական հաստատութիւնները, իրենց նիւթական և բարոյական մասնակցութեամբ շքեղութիւն տալու նոյն հանդէսին.

Դիւան Վ. Յ. Յ. Կ. Յանձնախումբի.
Ատենադպիր Զիթունի Ատենապետ Հմայեակ Դարբինեան
Նախագահ Մեսրոպ քահանայ Ծանիկեան

Ամէն առաքումի համար՝ հասցէ —

—Առաջնորդարան Հայոց, Վան.

«Վարագայ Յոբելեանի Յանձնախումբին»